միայն ուղեւորներ առնելու:



ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ

Ճապոնի Միջերկրական ծովը իրաւամբ կարելի է անուանել աշխարհիս ամենագեղեցիկ վայրերից մէկը: Արդէն իր անունը ցոյց է տալիս, որ ամեն կողմից շրջապատուած է ցամաքով, միայն մի քանի նեղ նեղուցներով միանալով բաց ծովի հետ:

Նա զետեղուած է երեք մեծ կղզիների մէջ, որոնք են՝ Նիպպոն, Կիու-Սիու եւ Սիկոկ.իինքն էլ ծածկուած հազարաւոր աւելի մանր կղզեակներով: Ծովի ամենամեծ լայնքը հազիւ է